

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հնագիտական ընկերութիւն Կովկասում.— Ներքին Տեսչութիւն. Ներքին գործերի պ. մինիստրի շրջաբերականը պ.պ. նախագահականին, քաղաքապետներին եւ օրէք-պոլիցի. մէյտերներին 1901 թ. մարտի 12-ից. Կարա-Մուրզայի կօնցէրառ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՐԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մենք հազարգէլ էինք, որ Թիֆլիսում է գտնվում կին-հնագիտ կոմսուհի Ուլա-րովա: Կոմսուհին հետաքրքրութեամբ է վերաբերվում գէպի մեր երկրի հնագիտական հետազոտութիւնները եւ մեծ նշանակութիւն է տալիս այդ հետազոտութիւնների կանօնաւոր կազմակերպութեան խնամարարին: Այդ պատճառով նա մեծ համակրութեամբ վերաբերվեց գէպի հնագիտական ընկերութեան հիմնարկութեան առաջարկը Թիֆլիսում, որը հանդէս եկաւ յարգելի արկնած Թիֆլիս գալու օրից:

Վաղը, մարտի 21-ին, երեկոյան, կոմսուհի Ուլարովայի ներկայութեամբ, Թիֆլիսի հասարակական ընթերցարանի դահլիճում տեղի կունենայ մի նախագատրաստական ժողով խորհրդակցելու այդ ընկերութեան կազմակերպութեան մասին: Մի քանի օր արանից առաջ նոյնպէս տեղի է ունեցել մասնաւոր խորհրդակցութիւն նոյն հարցի մասին եւ այդպիսով խնդիրը մի որոշ աստիճան մշակվել է արդէն եւ թեթեւացրել վաղվայ ժողովի գործը:

Հնագիտական ընկերութիւն կարելի է կազմել երկու տեսակ. կամ բոլորովին ինքնուրոյն, յատուկ կովկասեան անունով, կամ իբրեւ Ճիւղ Մոսկվայի կենտրոնական հնագիտական ընկերութեան: Ինքնուրոյն ընկերութիւն կազմելը անկասկած ունի իր շատ լաւ կողմերը, որովհետեւ նրան կարելի է բոլորովին յարմարեցնել տեղական առանձնապատկանութիւններին եւ պահանջներին, բայց մի եւ նոյն ժամանակ նրա իրազորումը շատ ժամանակ կը պահանջէր եւ կարող էր հանդիպել մի շարք ձեւական արգելքների: Մինչդեռ, եթէ այդ ընկերութիւնը բացվի, իբրեւ կենտրոնական ընկերութեան մի յատուկ Ճիւղ, նա կարող կը լինէր շատ շուտ բացվել, որովհետեւ կենտրոնական ընկերութիւնը իրաւունք ունի Ճիւղեր բանալ ըստ իր արեւելեան շրջաններին: Կենտրոնական ընկերութիւնը ունի մեծ արտօնութիւններ եւ իր Ճիւղերին տալիս է գործերու ազատութիւն: Ընկերութեան կանօնադրութիւնը ոչ մի արգելք չի դնի տեղական Ճիւղի ինքնուրոյն գործընթացին, իսկ ժամանակով կարող է համապատասխան բարեփոխութիւններ մտցնել կանօնադրութեան որոշ կետերում:

Ներկայումս այդ երկրորդ ձանապարհը աւելի գործնական է եւ նպատակայարմար: Եւ յաւ կը լինէր, եթէ վաղվայ ժողովը կարողանար սկիզբ դնել Կովկասի համար անհրաժեշտ այդ հիմնարկութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԳՐԾԵՐԻ Պ. ՄԻՆԻՍՏՐԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Գ. Պ. ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐԻՆ, ՔԱՂԱՔԱՊԵՏՆԵՐԻՆ ԵՒ ՕՐԵՐ-ՊՈԼԻՑԻՒՅԵՍՏԵՐՆԵՐԻՆ 1901 ԹԻ ՄԱՐՏԻ 12-ԻՑ

Անցեալ փետրվար ամի վերջում եւ այս մարտ ամի առաջին թերթին հասարակական կարգը եւ խաղաղութիւնը կայրութեան մի քանի քաղաքներում մի քանի անգամ խանգարվեցին փողոցային անկարգութիւններով:

Այդ անկարգութիւնների ընթացքի մասին ներքին գործերի մինիստրութեանը ներկայացրած տեղեկութիւններից եւ տեսայ, որ թեւեւ տեղական իշխանութիւնների կողմից ձեռք էին առնվում համապատասխան համարված միջոցներ անկարգութիւնների դէմ, սակայն շատ դէպքերում ոստիկանութեան կարգադրութիւնները հաջի. թէ կարողանան ճանաչվել կատարելագոյն համապատասխան այն արգելութեանը եւ վճարականութեանը, որոնք անպայման անհրաժեշտ են ծագած անկարգութիւնները անյայտաբար ճնշելու եւ խանգարված կարգն ու հասարակական խաղաղութիւնը վերականգնելու համար: Բացի դրանից իմ ուշադրութիւնն է դրաւում իր վրա եւ այն հանգամանքը, որ ոստիկանական իշխանութիւնները, ըստ երեւոյթի, բաւականաչափ չեն իւրացրել այն գիտակցութիւնը, թէ ոստիկանական մարմինները հաւասարապէս, եթէ ոչ աւելի մեծ չափով, պարտաւոր են միջոցներ որոնել ոչ միայն օրէնքի մամն տեսակ խանգարումը բռնաւոր, այլ մասնաւոր նրանց առաջը վաղորդ առնելու համար: Փողոցային անկարգութիւնների դէպքերում ոստիկանական մարմինների կողմից ձեռնարկված նախազգուշութեան այս երկրորդ տեսակ միջոցները առանձնապէս անհրաժեշտ են, որովհետեւ ժամանակին ձեռնարկված են կանօնաւորապէս գործարկված միջոցները ցանկալի են դառնում հէնց այն ժամանակ, երբ ամբողջ միայն նոր է սկսում ժողովվել անկարգութիւնների տեղը, որոնց զարգանալուն եւ ընդարձակվելուն կարելի է սահման դնել հէնց խանգարութիւնների սկզբում:

Դժբախտաբար, մի քանի դէպքերում հարկ կեղծ կարգադրութիւնների բացակայութիւնը նկատել եմ եւ գլխաւորապէս անկարգութիւնների այս սկզբնական, նախապատրաստական շրջանում, եւ այս հանգամանքը, ի հարկէ, անհրաժեշտ է դարձնում զիմել յուրջ միջոցների ամբողջ խաղաղարարութեանը: Այսպէս, մի դէպքում ոստիկանութիւնը, մի քանի ժամ առաջ այն օրպէս, երբ վաղորդ պարտաւորված ցուցը դարձաւ փողոցային անկարգութիւն, ըստ երեւոյթի, նկատել էր արդէն, որ անկարգութիւններ անելու նպատակ ունեցող անձինք ուղևորվում են իրանց ընթացք տեղը, ուշադրութիւն էր դարձնում իր վրա եւ այն, որ բացի առաջին ընթացք տեղը անմիջապէս ժողովված անձերից, շատերը նշանաւոր խմբերով հաւաքվում էին ժող տեղերում եւ սպասողական դիրք բռնում: Բայց չը նայելով արան, համարում էին ժող տեղերում միջոցները պէտք է վերաբերվեն: 1) անկարգութիւնների ծագման ստաջն առնելուն, 2) ծագած անկարգութիւնը դադարեցնելուն եւ 3) խանգարված կարգը վերականգնելուն:

Դիմելով առաջին կարգի միջոցների քննութեան, եւ ամենից առաջ ցանկալի կը համարէի, որ տեղական նախագահական բարձր իշխանութիւնները հող տանեն դանելու համապատասխան եղանակներ նրա համար, որ, ըստ կարելոյն, առաջուց տեղեկ լինեն մտադրվող անկարգութիւններին: Այս նպատակով պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել ոստիկանական պաշտօնեաների զիտողական գործունէութեան վրա Ոստիկանութիւնը, ուշադրութեամբ զիտելով ազգայնականութեան այն տարրերը, որոնք որոշ տեղի եւ ժամանակի պայմաններում ամենից աւելի հակված են անկարգութիւններ անելու, պէտք է առաջուց ստաջնայ գէթ մի քանի ցուցումներ անկարգութեան նախապատրաստման մասին այս կամ այն ձեւով: Այս տեսակ ցուցումներ կամ տեղեկութիւններ ստանալուց յետոյ ժողովրդի անսուփոր համարման մասին որ եւ է տեղում

երեւոյթին, բաւականանում էին միայն թող կերհամոզելով եւ ձեռնառնել էին լինում հեռացնելու խոտվարար ամբողջ անկարգութիւնների տեղից բաւական երկար ժամանակից յետոյ: Ժամանակին ձեռնարկված միջոցների բացակայութեամբ եւս միևնույն այն փաստը, որ մի դէպքում հնարաւորութիւն տրվեց ամբողջ հաւաքվել անկարգութիւններին մասնակցելու համար կայանաւորված անձերի ժամանակաւոր բանտարկութեան տեղի մօտ, եւ մինչեւ անգամ բանակցութիւնների մէջ մտնել կարանաւոր փոփոխութիւններ, փոխաւելի են ցրվել աղմկարարներին այն ժամանակ միայն, երբ արդէն նրանք հաւաքվել են եւ կազմել աւելի կամ պակաս չափով նշանաւոր համարմաններ, որոնք մինչեւ այդ ժամանակ անպատիժ չըլուծ էին փողոցներում աղմուկ-աղաղակով ու երգերով, գրաւելով հեւաքքերով զոյնների եւ այլ անգործ մարդկանց բազմութիւն:

Հասարակական կարգի եւ խաղաղութեան պահպանումը, աղմկալի եւ անկարգ համարմանների արգելումը եւ արանց համար համապատասխան միջոցների դիմումը կարգում են ոստիկանութեան անմիջական պարտականութիւնը, իսկ նախնապատեաների, քաղաքապետների եւ օրէք-պոլիցիայի շտաբների վրա օրէնքը պարտաւորութիւն է դնում ձեռք առնել, քնակները մէջ անկարգութիւններ ծաղկելու դէպքում, բոլոր կարեւոր, ամենազոր եւ ամենաքաղաք միջոցները այդ անկարգութիւնները դադարեցնելու, մտղովածներին խեղճի բերելու եւ անհնազանդներին ճնշելու համար Սրա համար նրանք կարող են պահանջել զօրքերի անվարկութիւնը եւ անհրաժեշտութեան դէպքում ուժով եւ խստութեամբ վերջ դնել խանգարութիւններին:

Հնարաւոր չը համարելով տալ որ եւ է մերձաւոր ցուցումն անկարգութիւնները դադարեցնելու եղանակների մասին, որովհետեւ այն եղանակները մի կողմից ցոյց են տուած օրէնքով, իսկ միւս կողմից, երբ պէտք է լինում ընտրութիւն անել նրանց գործողութիւն, յաճախ կարելի են պատահական հանդամանքներից եւ տեղին ու ժամանակին վերաբերեալ պայմաններից, եւս այսուամենայնիւ, օրէնքով ինձ վրա դրած պարտաւորութեան զօրութեամբ պահպանելու ներքին ազանովութիւնը պետութեան մէջ, անհրաժեշտ եւ համարում տալ պ. պ. նախագահականներին, քաղաքապետներին եւ օրէք-պոլիցիայի շտաբներին հետեւեալ ղեկավարող սկզբունքները այն միջոցների մասին, որ եւս համարում եմ ամենից աւելի նպատակաւարմար անկարգութիւնների ծագելու դէպքում:

Համապատասխան այն մօմէնտներին, որոնց վրա կարող է բաժանված լինել մի որ եւ է անցը, նրա վերաբերմամբ ձեռնարկված միջոցները պէտք է վերաբերվեն: 1) անկարգութիւնների ծագման ստաջն առնելուն, 2) ծագած անկարգութիւնը դադարեցնելուն եւ 3) խանգարված կարգը վերականգնելուն: Դիմելով առաջին կարգի միջոցների քննութեան, եւ ամենից առաջ ցանկալի կը համարէի, որ տեղական նախագահական բարձր իշխանութիւնները հող տանեն դանելու համապատասխան եղանակներ նրա համար, որ, ըստ կարելոյն, առաջուց տեղեկ լինեն մտադրվող անկարգութիւններին: Այս նպատակով պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել ոստիկանական պաշտօնեաների զիտողական գործունէութեան վրա Ոստիկանութիւնը, ուշադրութեամբ զիտելով ազգայնականութեան այն տարրերը, որոնք որոշ տեղի եւ ժամանակի պայմաններում ամենից աւելի հակված են անկարգութիւններ անելու, պէտք է առաջուց ստաջնայ գէթ մի քանի ցուցումներ անկարգութեան նախապատրաստման մասին այս կամ այն ձեւով: Այս տեսակ ցուցումներ կամ տեղեկութիւններ ստանալուց յետոյ ժողովրդի անսուփոր համարման մասին որ եւ է տեղում

հարկաւոր է, առանց յետաձգութեան, ուժեղացնել տեղական ոստիկանական ոյժերը, որոնց գլխաւոր պարտաւորութիւնը սկզբում պէտք է լինի միջոցներ ձեռք առնել թող չը տարու հասարակութեան խմբով եւ արգելելու այն անձերին, որոնք մտադրվում են անկարգութիւններ առաջացնել, միանալ եւ կազմել աւելի կամ պակաս չափով նշանաւոր ամբողջ Սրա համար ոստիկանական պաշտօնեաները պարտաւոր են հէնց այդ ժամանակ ամենայն աշարջութեամբ հսկել մի քանի հողուց բաղկացած խմբերը եւ անցորդների այնպիսի հաւաքման վրա փողոցում կամ մայրթերի վրա, որ առաջ չէ գալիս որ եւ է հիմնաւոր պատճառեց: Նկատելով այդ տեսակ երեւոյթ, ոստիկանական պաշտօնեաները պէտք անյայտապար պահանջ յայտնեն ցրվելու, եւ առանց կանգ առնելու շարունակել իրանց ճանապարհը, եւ չը խանգարելու ուրիշների ազատ անց ուղարձը: Այս պահանջը պէտք է յայտնվի քաղաքապետի, բայց անուշառ հեղինակաւոր ձեւով եւ անխտիր բոլոր անձերին, չը նայելով նրանց կոչման ու դիրքին, լիչելով որ բոլորն էլ պարտական են առանց հակաճառութեան հնազանդելու ոստիկանութեան օրինաւոր պահանջներին: Այս պահանջին չը հնազանդվողին ոստիկանական պաշտօնեան պէտք է լիչեցնել անհնազանդութեան հետեւանքները, իսկ յամառութեան դէպքում, պէտք է ձերբակալել եւ ուղարկել մօտակայ ոստիկանատունը արձանագրութիւն կազմելու եւ օրինական պատասխանատւութեան ենթարկելու համար: Այն տեղերում, ուր գործարկվում է ուժեղացրած պաշտպանութեան կանօնադրութիւնը, այդպիսի անձինք պէտք է ենթարկվին պատժի՝ վարչական կարգով, որի համար պէտք է ամէն տեղ ժամանակին հրատարակվին, յիշված կանօնադրութեան 15-րդ եւ 16-րդը յօդուածներին համաձայն, համապատասխան պարտաւորական կանօններ փողոցային ժողովներին եւ համախմբումների արգելման մասին:

Եթէ, սակայն, չը նայելով բոլոր ձեռք առած միջոցներին, անկարգութիւններ առաջացնել իրանց նպատակ դրած անձինք կը սկսեն կարգը եւ հասարակական հանգստութիւնը խանգարող գործողութիւններ, այսինքն կը խմբվեն, չը կամենալով ցրվել, կը սկսեն աղմուկ հանել, աղաղակել, ճառեր արտասանել, փորձեր կանեն զիմադրութիւն ցոյց տալ ոստիկանութեան կարգադրութիւններին այս կամ անձին բռնելու դէպքում եւ այլն, այն ժամանակ վարչական եւ ոստիկանական պաշտօնեաների վրա պարտաւորութիւն է դրվում անյայտապար ամենակարգական միջոցներ գործ դնել անկարգութիւնը դադարեցնելու համար, նոյնպէս էլ հեռացնել այդ անկարգութիւնների տեղից հետաքրքրվող հասարակութիւնը, որի ներկայութիւնը յաճախ նշանաւոր չափով ջլատում է ոստիկանական պաշտօնեաների գործունէութիւնը, նրանց ուշադրութիւնը հեռացնելով գլխաւորապէս նպատակին հասնելուց եւ հարկադրելով նրանց իրանց ժամանակի եւ միջոցների մի մասը նուրիկ երկրորդական խեղճիներին: Մի եւ նոյն ժամանակ անպայման անհրաժեշտ է մասնացոյց արած կարգադրութիւններին վերին աստիճանի ետանդուն բնաւորութիւն տալ, որպէս զի արդը եւ յամառ գործունէութեան եղանակով կարելի լինի ստիպել անկարգութիւն անող անձերին իսկոյն եւ եթէ ցրվել եւ մաքրել անցքի տեղը Արդը գործելու, ետանդի եւ յամառութեան բացակայութիւնը ոստիկանութեան պաշտօնեաների կողմից անկարգութեան սկսվելու հէնց առաջին վայրկեանում անկասկած պատճառ է դառնում նրա ստիճանաբար դարգանալուն եւ սպա անհրաժեշտ է դառնում ծայրայեղ միջոցների գործարկութիւնը: Այդ վայրկեանին ոստիկանութեան բոլոր պաշտօնեաները պէտք է համակված լինեն միայն մէկ նպատակով՝ ամեն միջոցներով կարգը արագութեամբ վերականգնել եւ դրա համար ձեռք առնել բոլոր պատշաճաւոր եղանակները, կանց չառնելով խստութեամբ եւ ուժով գործելու անհրաժեշտութեան մասին:

ված ընթացքը չը առնելու յայտնել զնրանք մա-
յոր Օրբիլին Բարձրագույն յանդիմանութիւնը:
Վիեննայի Բէլգրադից հաղորդում են, որ
գահաժառանգութեան վերաբերեալ հարցը այ-
ժմ մշակվող սերբիական նոր սահմանադրու-
թեան մէջ լուծված է այն մտքով, որ այն
գէշագու՞մ, եթէ Օրբիլինի արական ուղ-
ղակի գիծը վերջանայ, գահաժառանգութեան
իրաւունքը կարող է անցնել յգահան գծին:

19 մարտի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մեծ իշխան Կոնստանտին
Կոնստանտինովիչ Օդոնտովաու ամուսնու հետ
մարտի 18-ին վերադարձաւ Պետերբուրգ:
Սէնիւն, Ռուսական երկու զինուորական նա-
ւեր, ուստայ ծովապետի հրամանատարութեան
տակ, եկան Չէմուլցո, համաձայն վաղուց ե-
ղած կարգադրութեան:

ԲԵՐԼԻՆ: Վերին պալատի նախագահական
բերօք ընդունելու ժամանակ, փոխ-նախա-
գահը յանձնեց կայսրին վերին պալատի շնոր-
հաւորութիւնը վտանգից ազատելու առիթով
կայսրը ինչպէս շնորհակալութիւն յայտնել
պալատին շնորհաւորութեան համար եւ ասաց,
որ բէմէնէնան անցքի պատճառով նա իր
հայեացքները չի փխի. նրա կեանքը Աստու-
ծու ձեռքումն է, նա անյողողը զիմում է իր
նպատակներին եւ սրանից յետոյ եւս, իր ոյ-
ժերի չափ, կը նպատե՞ն հայրենիքի բարօ-
րութեանը:

Վիեննայի Բէլգրադից ստացված տեղեկու-
թիւնները համաձայն, գահաժառանգութեան
վերաբերեալ հարցը լուծվել է սերբիական նոր
սահմանադրութեամբ այն կերպով, որ Օրբի-
լինի արական ուղղակի գծի վերջանալու
դէպքում գահաժառանգութեան իրաւունքը
անցնում է թագաւորու արքայի իգական սե-
րունդներին ուղիղ զծով:

ԼՕՆԻՕՆ: Սոյաբուրիի հիւանդութիւնը այն-
պիսի անբարեկամ ընթացք ստացաւ, որ նրա
ուղեւորութիւնը զգալի Ֆրանսիայի հարաւը
կարող է վերացված համարվել: Կարելի է պա-
սել, որ գեռ մինչև ասպրիլ վերջը Սոյաբուրի
կը հրժարվի նախագահութիւնից մինչարու-
թեան մէջ:

Երազդի՝ ԱՆԻՔՍԱՆԵՐ ԲԱՆԿՈՒՄ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՌԱՋԻՆ ՄԵՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԿՎԱՆՈՑ
Բ. ՆԱԻՍՏՈՐԻՆԵԱՆԻ
(Կուկիա. Վորոնցովի արձանի հանդէպ)
ա մեց օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՋՈՑՆԵՐԸ
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վրարուժու-
թեան, վերական (սիֆիլիս) և միզաւեռ. հիւանդ.
Կ. Մ. Քիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և
ներքային ճ.
Կ. Ս. Պոլիկով—12—1 ժ. ականջի, քթի և կո-
կորդի ճ.
Զ. Բ. Քարանասեանց—11—12 ժ. կանանց և երե-
կայաց հիւանդ.
Կ. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երե-
կայաց ճ.
Կ. Ն. Ռուսոսթեյկով—5—6 ժ. վրարուժութեան և
մորթու ճ.
Կ. Ն. Եպիփանի—6—7 ժ. ներքային (երեկ-
արարուժութիւն) և վերին ճ.
Գ. Ա. Փարսխանով—7—8 ժ. ներքին և երե-
կայաց ճ.
Բ. Ա. Նաւասարդեան—7 1/2—8 ժ.
Վճար 50 կ. քարտերը ձրի համախորհրդի (կոն-
սիլումի) և օպերացիայի համար առանձին:
Փ. Տ. Ասվանիակի—տանը. ծաղկաճառ և բժը-
կական մարմնամարդ. զիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերատեսուչ
Բժօկապետ ՆԱԻՍՏՈՐԻՆԵԱՆ

Երազդի՝ ԱՆԻՔՍԱՆԵՐ ԲԱՆԿՈՒՄ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՂԻ ՏԻԳՐԱՆԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

Յ. Յ. ՂՈԿԻԷԼԵԱՆԻ
Ընդունում է՝ վերական, արտական, մորթու
և ներքին հիւանդութիւն ունեցողներին:
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—8 ժամը.
Միխայիլովայա եւ Նեմեցկայա փողոցների
անկիւն, տուն Սիլվիիցու, մուտքը Նեմեցկայա
փողոցից: 2—25

ԱՐՏԻՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, մարտի 22-ին,
Բազուի հայ դրամատիկ զերասանական ընկե-
րութիւնը, բարեհաճ մասնակցութեամբ ա.
Չարուհու, օր.օր. Հայկանոյ Չեչկանի, Վար-
սենիկի եւ Յակոբեանի, կը տայ իր վերջին
հրաժեշտի ներկայացումը
Ի Ն Պ Ա Ս Տ Տ Ի Կ Ի Ն Ս Ի Ր Ա Ն Ո Յ Շ Ի

ՄԱԴԱՄ ՍԱՆՃԷՆ
Կովեղիա 4 դործող. Սարգուի, Թարգմ. Թար-
խանեանի
Տեղերի գինը սովորական է:
Տոմսակները ծախվում են միմիայն կասայում:
Սկիզբը երեկոյեան ճիշդ 8 ժամին:
1—3

Մարտի 21-ին 1901 թ.ին, Ներսիսեան հա-
յոց հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան խոր-
հրդարանում լինելու է աճուրդ կազմակերպու-
ման հանդուրդով Թագուհի Փանոսեանցի տան
կէս մասը, որ նա ընծայել է դպրոցին, իսկ
միւս կէս մասը պատկանում է Թիֆլիսի քա-
ղաքացի Միքայել Պավլովիչ Իվանովին: Այդ
տունը գտնվում է 7-րդ քաղաքամասում Կա-
խետինսկայա հրապարակի արևմտեան կողմը
Վիննի պողոտի փողոցի վրա № 44: Դպրոցա-
կան մասը բերում է տարեկան 750 ռուբլի:
Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգա-
բարձութեան զիւանատանը, ամեն օր բացի
կիրակի եւ տօն օրերից, ցերեկվայ 10—1
ժամը: 2—2

Մարտի 21-ին 1901 թ.ին, Ներսիսեան հայոց
հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան խորհրդար-
անում լինելու է աճուրդ կազմակերպու-
ման հանդուրդով Թագուհի Փանոսեանցի տան
կէս մասը, որ նա ընծայել է դպրոցին, իսկ
միւս կէս մասը պատկանում է Թիֆլիսի քա-
ղաքացի Միքայել Պավլովիչ Իվանովին: Այդ
տունը գտնվում է 7-րդ քաղաքամասում Կա-
խետինսկայա հրապարակի արևմտեան կողմը
Վիննի պողոտի փողոցի վրա № 44: Դպրոցա-
կան մասը բերում է տարեկան 750 ռուբլի:
Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգա-
բարձութեան զիւանատանը, ամեն օր բացի
կիրակի եւ տօն օրերից, ցերեկվայ 10—1
ժամը: 2—2

Ա Ս Տ Ր Ա Ն Ա Ն Ի
ս. Աստուածածին աւազ եկեղեցու համար
Հ Ա Ր Կ Ա Ս Ի Ո Ր Է
ձայնաւոր եւ գործին տեղեկ խորագետ: Պայ-
մանները մասին դիմել. Битору Армянскаго
Собора Христофору Абагарьянцъ.
2—5

ՎԱՃՆՈՎՈՒՄ Է
1. Հանդուրդեալ Թագուհի Փանոսեանի կա-
ռուածը (քարվանսար), Հալաբարում, Կախե-
տինսկայա փողոցում: Հողի քանակութիւնն
է 1442 քառակուսի սաժէն: 2. Երկայրկանի
նոր տունը Մետախիսկայա փողոցում, Գնի
մասին կարելի է տեղեկանալ երջուկեալ հաւա-
տարմատար Յովսէփ Ամիրխանեանից ամենայն
օր երեկոյեան ժամի 5-ից մինչև 7: Միջոճ-
միջոցակալ փողոցում տուն № 17:
(18, 20, 22) 2—3

Ներկայ մարտի 1-ից բացված է սկիզբ կերտինի, մեքենաւորի, գուղճուի, մագուստի եւ
այլ նաւթային արտադրութիւնների, հետեւեալ ֆիրմայով
„Առաջին կերտինսկային սկիզբ Խօջարագիրով եւ ընկ.“
Ունենալով միշտ սկիզբում պաշար վերոյիշեալ նաւթադրուքների, ամեն պատուէր, ինչ-
պէս Բագու քաղաքի համար, նոյնպէս նաւթահանքերի եւ այլ տեղերի համար կատարվում են
անսխալապէս եւ ճշգրիտ:
Սկիզբը գտնվում է Տէլէֆօնայա փողոց, սեփական տուն (երկաթուղային կամրջի
ժամ): Տէլէֆօն № 44, իսկ ընտարանինը 248:
(ե. օ.) 1—10

Մ օ օ ր Ե ր ւ լ յ ւ է տ Ե ս ն Է լ ու
ՖԱՐՐԱՐԻ ՔԱՐՈՂՆԵՐ
Գինն է 1 ՐՈՒԲԼԻ
Քանանները եւ իմ նախկին աշակերտները կարող են ամենայն սիրով ձրի ստանալ օրի-
նակները, ուղարկելով միայն պատի ծախք (10 կօպ.):
Գրալածանները կը ստանան 40% զիջում, եթէ կանխաւ վճարեն գինը եւ առնուազը 10
օրինակ պատուիրեն:
Հասցէս. Св. Эчмядзинъ. Типографическому Комитету. Съ передачею С. М.
Սեդրակ Մանդինեան
2—5

Թիֆլիսի Կենտրոնական գրախաճատանոցում
Ճախվում են հետեւեալ հայերէն նոր գրքերը՝
Ա լ ի ա զ Ե ա ն ց Ա. սարկ., Համառոտ ձեռնարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուաստ-
ման, Թիֆլիս, 1901 թ. 5 կօպ.:
Ա հ ա ր օ ն Ե ա ն Ա., Պատկերներ, Մօսկվա, 1900 թ. 1 ռ.:
Ա զ ա ն Ե ա ն Գ. ա. քահ., Լուսնայ, գրական հանդէս, վեցերորդ տարի, գ. ա. 1901 թ. փետր.
Թիֆ. գ. 2 ռ.:
Զ ա հ ր ի Ե ա ն ց Ս., Պօլի-Բէք (Քեռ-օղու հէքիաթներից մէկը), Ալեքս. 1900 թ. 35 կ.:
Լ ա լ ա յ Ե ա ն ց Ե., Գանձակի դաւառ, հատ. ա., Թիֆլ. 1901 թ. 80 կ.:
Կ օ ր օ լ Ե ա ն ց Վ., Կոյր երաժիշտ (էտուր), Թիֆլ. 1901 թ. 60 կ.:
Ճ ա ն ի կ Ե ա ն ց Ե., Դժոխք (բարոյական) հատ. ռ., մ. ռ., Թիֆլիս 1900 թ. 30 կ.:
Է օ ժ է ն-Ս ի Ե., Թափառական հրէայ, 4 հատոր (հաղուադիւս), Կ. Պօլիս, գ. 10 ռ., կազմած
10 ռ. 80 կօպ.:
Վ օ ր օ ն օ Վ Ի., Մազնիս (սեռեր մանուկներին սերխայից), Թիֆլ. 1901 թ. 12 կ.:
Տ ա զ ա Վ ա ր Ե ա ն ց Ե., Դարվինականութիւն, Պօլիս, 1901 թ. 30 կ.:
Որրունի կամ պատկերազարդ բացարձակ Բազմապէս, Վենետիկ, 1900 թ. գ. 1 ռ.:
Ձ է յ թ օ ւ Ե յ Ե ի, Ձէյթունի անցեալէն եւ ներկայէն ա. մ. Վիեննա 1900 թ. գ. 1 ռ. 50 կ.:
Ս ա զ մ օ ս՝ մեծագիր, Պօլիս, գ. 60 կ.:
» փոքրագիր, Պօլիս, 1 ռ.:
» Թախչով պատած եւ ոսկեզօծ, Պօլիս, 2 ռ.:
Պարտէզ հոգեւոր թախչով պատած եւ ոսկեզօծ, Պօլիս, 2 ռ.:
Մ ի ր ա ի օ ր Ե ա ն ց Մ., Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ դաւառս արեւելեան
Տաճկաստանի, Պօլիս, գ. 3 ռ.:
Դիմել՝ Типлицъ, Въ Центральную Книжную Торговлю. (ե.) 3—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ic
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՏՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու-
շաբթի մի անգամ:
Եւ հակառակը՝ Բատուից Մարսել, մանկուլ Տրապիզօն, Սաւսօն եւ Պօլիս: Մեկնում է
Բատուից՝ չորեքշաբթի, մարտի 21-ին (ապրիլի 3)—չորեանու՝ ԱՆԱՏՈՒԻ, կապիտան ԲԻՆԿԻ:
Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից
յետոյ:
Բատուից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օտարակ մից
պակաս գներով:
Ամբողջ մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բատուի եւ Անտիբոպէի մէջ, ընդու-
նելով ապրանքներ ըտող հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատաններին՝
ԲԱՏՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր Գ'Անտիբո, Նաբէրէժնայա Թիֆլիսիում—պ. Օ. Բարե-
կենդանեանին, Սիօնի փող. Նօյափարուստովի եւ Մայսուրաձէի քարվանսարաւ ԲԱՄՈՒՄ—պ.
Վ. եւ Ի. Մուսթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիովի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
ՍԻՅԱՎ—Վրացիակալի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. օ. շ.) 19—20

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ
1889, 1890, 1891, 1892, 1893 թ. ամիսով
տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զի-
ջումով:
Դիմել—Վիեննայի փողոց № 24, գրասենակ
Ա. Չարդարեանից եւ Փ. Վարդապետեանի:
(ճ. շ.) 14—20

Cafe Siller Kaiser Ferdinands platz
WIEN
Կ Ը Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Ն Ե Մ
որ սրճարանի մէջ կը պատրաստվին սուրճ, ա-
մենաբնորոք ուստայ թէյ, խմիչքներ եւ քաղցրե-
ղէններ: Կան օտարազգի լրագրները: 7—10

Ձ Ի Ն Գ Ե Ր Ի
Ի Ս Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ր Ի Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր
ԿԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՍՅՆ ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏԻ ՎՐԱ,
Մ Ի Ը Ի մ ա ն օ Վ Ի տ ա ն Ը:

**Չիկագերի ընկերութեան իւ-
րաքանչիւր մեքենան կը-
րում է գործարանական**



**աշս կնիքը. հակառակ դեպ-
քում՝ մեքենան խկա-
կան չէ**

Չարմանալի չէ, որ միւս առեւտրականները յաճախ աշխատում էին և էլի դեռ աշխատում են, օգտվելով Չիկագերի անու-
նից, ընդարձակել իրանց մեքենաների վաճառումը, որ նրանց առանց այդ բանի հաղիւ թէ հնարաւոր լինի: Նրանց նպատակն է
մոլորեցնել հասարակութեանը իրանց ֆարքիկաների ծագման վերաբերմամբ, որովհետեւ իրանց այսպէս անուանված «Չիկ-
ագերի» մեքենաները զովարանելով նրանց աշխատում են հաւատարման գնողներին, թէ վաճառվող մեքենան Չիկագերի ընկերու-
թեան ֆարքիկանն է: «ՆԱՍՍԱԻՍ—Չիկագերի» անուանված և այլ մեքենաները անպայման մեր գործարանից չեն ծագում:
Չիկագերի ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ